որ եկեղեցիք վայելուչ ու մաքուր պահուին, ի գաւառս մանաւանդ ի գիւղօրէս եկեղեցեաց գաւիթք չգործածուին իրրև ամարանոց, սեղանք վայելուչ պարգութեամբ զարդարուի. անօծ պատկերներ իրրև զարդ չդնել սեղանի վերայ, եկեղեցական անօթներն, սպասներն և այլ ամենայն ինչ մաքրութեամբ ու վայելչութեամբ գործածել, յապահովի պահել արձանագրելով անուամբ, կշռով, տեսակաւ և քանակութեամբ, աշխատիլ եկեղեցական անօթոց և գոյից առաւելութեան, և յարտակարգ Հարկի վաճառման տեղեկագրով դիմել առ կեդրոնական վարչութիւն արգելուլ ժողովրդեան մանաւանդ կանանց՝ եկեղեցւոյ դասին մէջ կանգնիլ, արգելուլ Ս. Պատարագի սպասաւորողաց, մոմակալ տղայոց՝ ոտնամանօք և առանց հողաթափի ի բեմ երթալ։ Հրահանգ տրուած է որ եկեղեցական համայն պաշտօնէութիւնք միակամ հոգ տանին եկեղեցական պաշտամանց երկիւղած պատկառանաք, լռութեամբ, պարկեշտութեամբ և ամենայն վայելչութեամբ կատարուելուն. արգելեալ են ձեւակերպութիւնք և դաշնակահարութիւնք։ Ցանձնարարեալ կրօնի ուսումն ոչ միայն պարտաւորիչ առնել այլ և նախադասել քան զամենայն ուսմունս։ Հրահանգներ կան նաև քարոզչաց, քահանայից, պանդուխտ քահանայից ու ընծայացուաց, մկրտութեան խորհրդոյ կատարման, ամուսնութեան, յուղարկաւորութեան, գերեզմանատանց համար։ Հրահանգներ կան միանգամայն սոյն հրահանգաց հսկող պաշտօնէից և ընդհանուր տեսչին համար։ Ի վերջոյ ծանուցեալ է թէ խիստ տնօրինութիւնք պիտի լինին այն անարդար պաշտօնէութեանց համար՝ որ՝ յանուն Ս. Կրօնի գանձուած, յանուն Ս. Եկեղեցւոյ հաւաքուած, յանուն բարեպաշտութեան կտակեալ նուէրներէն կըզլանան բաժին հանել Ս. Եկեղեցւոյ պայծառութեան ու պիտոյից կրօնի ուսման և զարգացման համար։

Այս ամենայն հրահանգաց, յանձնարարութեանց ու ազդարարութեանց նպատակն է հեռաւել ուղղութեան ու արդարութեան, նախանձախնդիր լինել ընտանեկան համեստութեան ու խաղաղութեան, զարգացնել կրօնի ու բարոյականի սէրն, և հոգ տանիլ զաւակաց ուսման և բարւոք դաստիարակութեան։ Այս հրահանգք նոր չեն. խմբագրեալ են պատրիարքական կոնդակներէ և նախորդ կրօնական ժողովոց շրջաբերականներէ, և ներկայ Կրօնական ժողովը պարտ անձին համարած է կոչումն ընել առ ի գործադրութիւն։ Արդարև կարևոր ու օգտակար են ամենքն ալ և բաղձալի է որ անթերի գործադրուին։

(Փ--ՆՉ)

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Շնորհակալութեամբ ստացանք

Ա. «Մովսէս Խորենացի և Հին Հայկական Վէպ» գործ Մ. Էմին Թարգմանեց Ռուսերէնից Խաչատուր Յովհաննիսեան Թիֆլիս, Յովհաննէս Մարտիրոսեանի Տպարանում, գին է 50 կոպէկ։

Բ. «Սիրոյ Զղջումն», թարգմանեց Պետրոս Տէր Յովհաննիսեանց. հրատարակութիւն Աւետիք Պապիանցի. տպուած է Շուշւոյ Հայոց Հոգևոր տեսչութեան տպարանում. գին է 10 կոպէկ։

Գ. Ռոստովում (Դօնի վերայ) Պ. Յ. Տէր Աբրահամեանի խմբագրութեամբ հրատարակվող "Донская пчела" լրագրի տարւոյս առաջին համարի հետ շնորհակալութեամբ ստացանք Ռուսերէն ընդարձակ Օրացոյց, որ բոլոր բաժանորդներին է ուղարկվում, իսկ հատով ծախվում է 50 կոպէկի։

Տարւոյս Յունվար ամսից սկսած հրատարակելու է Վիէննայի Մխիթարեան Հարց խմբագրութեամբ «Հանդէս ամսօրեայ» բարոյական, ուսումնական և արուեստական ամսագիրը։

Թերթը խմբագրվում է Տաճկահայոց բարբառով, որչափ մեր ստացած առաջին համարի ընթերցումից կարողացանք հասկանալ՝ Մխիթարեան հարց այս հրատարակութիւնը կարող է օգտաւոր լինել ընթերցողներին։

Ամսագրի ներքին արժանաւորութիւնը երաշխաւորեալ է Վիէննայի ուսումնական հարց համբաւովը, իսկ տպագրութիւնը շատ գեղեցիկ է։

Տարեկան գին է 8 ֆրանկ խմբագրութեան հասցէն A la Rédaction de la Revue "Hantesse" Au Couvent Mechitharistes à Vienne (Autriche)

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ.

ԴԻՒԱՆ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի Ազգիս ի 22 Դեկտ. անցեալ ամի ընդ համարաւ 784 հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական-ծխական արականաց ուսումնարանի Մեղրի գեղջ՝ բարեկրօն Վահան քահանային Տէր Գրիգորեանց և պատուելիք երեցփոխան Գրիգորն Տէր Զաքարեանց և Մկրտիչն Մկրտչեանց։

—

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի Ազգիս ի 10 Յունվարի ընդ համարաւ 19 հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական-ծխական միգասեան արականաց ուսումնարանի Սուրբ Յովհաննէս եկեղեցւոյ Հայոց Դահարլի գեղջ՝ բարեկրօն Դաւիթ քահանայն Սահակեան և պատուելիք երեցփոխան Յարութիւնն Յովհաննիսեանց և Կարապետն Տէր Թովմասեանց։

—

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի Ազգիս ի 10 Յունվարի ընդ համարաւ 20 հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական-ծխական միգասեան արականաց ուսումնարանի Ս. Աստուածածին եկեղեցւոյ Հայոց Խանլըղլար գեղջ՝ բարեկրօն Եղիշէ քահանայն Թարվէրտեանց և պատուելիք երեցփոխան Ահարոնն Մուրատեանց և Այվազն Մահտեսի Բարայեան։

—

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի Ազգիս ի 10 Յունվարի ընդ համարաւ 21 հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական-ծխական միգասեան արականաց ուսումնարանի Հայոց Բաշ-Ճիրակ գեղջ՝ բարեկրօն Սահակ քահանայն Տէր Գասպարեանց և պատուելիք՝ երեցփոխան Պօղոսն Սիմէօնեանց և Սիմէօնն Սիմէօնեանց։

—

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի Ազգիս ի 10 Յունվարի ընդ համարաւ 22 հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական-ծխական միգասեան արականաց ուսումնարանի Հայոց Ղզլչախչախ գեղջ՝ բարեկրօն Մարկոս քահանայն Մկրտչեան և պատուելիք՝ երեցփոխան Յարոյն Մարտիրոսեան և Դաւիթն Տէր Աւետեան։

—

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի Ազգիս ի 10 Յունվարի ընդ համարաւ 23 հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական-ծխական միգասեան արականաց ուսումնարանի Հայոց Փիրվալի գեղջ՝ բարեկրօն Մարկոս